**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/14-6**

ք.Երևան «19» «06» 2023թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Կամո Ամիրխանյանի, որը գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սուրեն Ազատյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 26.12.2022թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/14-6 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

Հիմք ընդունելով Վաճառող կազմակերպության՝ «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի, 13.06.2023թ.-ի թիվ 070/023 գրությունը (ՔԿԾ մուտք՝ N659) մատակարարման ժամկետի երկարաձգելու վերաբերյալ, կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N2 հավելվածով՝ «Մատակարարման ժամանակացույց»-ով, թիվ 15 չափաբաժնով նախատեսված 600 լրակազմ կիսաբրդյա բաճկոն և ազատող փողքերով տաբատի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և 2-րդ եռամսյակի փոխարեն, սահմանել մատակարարման նոր ժամկետ՝ մինչև 2023թ.-ի հուլիսի 30-ը ներառյալ:

2. **Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/14-6 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | Հասցե՝ ք. Երևան, Զ.Սարկավագի 157 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Արարատբանկ ԲԲԸ |
| Հ/Հ 900011175016 | Հ/Հ 1510023294810100 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 00803554 |

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Պ/Կ
Կ. Ամիրխանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Տնօրեն՝
Ս.Ազատյան
/ստորագրություն/
Կ.Տ